Համացանցի դրական և բացասական ազդեցությունը դպրոցահասակ երեխաների վրա:
Ինչպե՞ս ծառայեցնել համացանցը որպես կրթական գործիք:

Անուն, ազգանուն՝ **Ռուզաննա Ալեքսանյան**

Մասնագիտություն՝ **Ուսուցիչ**

Դպրոց՝ **Սարավան գյուղի հիմնական հանրակրթական դպրոց**

Բովանդակություն

No table of contents entries found.

Ներածություն

21-րդ դարում համացանցը փոխել է ամեն ինչ, որից անմասն չեն մնացել երեխաները: Այն կյանքի համար ստեղծել է մի նոր աշխարհ, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել մարդու կյանքը: Համացանցի՝ WorldWideWeb-ի ստեղծողը բրիտանացի գիտնական Թիմ Բերներս-Լիին է: Համացանցը հրաշալի գործիք է բանիմաց, նպատակասլաց ու խելացի մարդկանց ձեռքերում:

Մուտք գործելով որոնողական համակարգ՝ մենք տեղեկություն ենք ստանում ցանկացած ինֆորմացիայի վերաբերյալ, սակայն համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Այստեղ մեծանում է ուսուցչի դերի կարևորությունը երեխայի բազմակողմանի զարգացման հարցում: Կրթական բարեփոխումների արդյունքում ուսուցիչը ոչ միայն պետք է գիտելիք փոխանցող լինի, այլ նաև ձևավորի գիտակից քաղաքացի, ով կկարողանա դիմակայել ժամանակակից աշխարհի մարտահրավերներին: Համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր է: Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Հետազոտական աշխատանքի ***նպատակն*** է ցույց տալ համացանցի բացասական և դրական ազդեցությունը աշակերտների վարքագծի և զարգացման վրա, աշակերտների մոտ նվազեցնել համացանցի բացասական ազդեցությունը և առավելագույնի հասցնել դրականը: Ձևավորել համացանցից անվտանգ օգտվելու այնպիսի հմտություններ, որպեսզի աշակերտները կարողանան խուսափել իրենից վտանգ ներկայացնող նյութերից և կարողանա ծառայեցնել համացանցը որպես կրթական գործիք:

Վերջնարդյունքում պետք է հասնել նրան, որ բարդ խնդիրներ լուծելու համար աշակերտը կարողանա արդյունավետ կերպով օգտագործի համացանցը, օգտվի մեդիագրագիտության նոր հմտություններից, որոնք արտահայտում են այն առանցքային և կարևոր ուսումնառության վերջնարդյունքները, որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցի երկրորդ դասարանից մինչև ավագ դպրոցի տասներկուերորդ դասարանների աշակերտներին՝ կյանքում հաջողությունների հասնելու համար: Թվային գրագիտության և համակարգչային գիտության առանցքային տարրերը նպատակ ունեն ուղղորդել համահունչ և խստապահանջ դասավանդմանը, որի արդյունքում աշակերտները վարպետորեն կտիրապետեն և կկիրառեն առարկայի շրջանակներում մատուցված գիտելիքը, փաստարկումները և հմտությունները:

Համացանցի դրական և բացասական ազդեցությունը դպրոցահասակ երեխաների վրա

Համացանցն ու համակարգչային խաղերը դարձել են մեր օրերի ամենակարևոր ու միառժամանակ ամենավտանգավոր գործոններից մեկը և ինչքան էլ մարդ փորձի, երբեմն նույնիսկ անհնար է դառնում կտրվել նրանից: Այս հարցում թերևս ամենախոցելի խմբերը

երեխաներն են: Հոգեբանական տեսանկյունից երեխաներին բավականին շատ է գրավում համացանցը: Ժամանակակից կյանքում անգամ նախադպրոցական տարիքի երեխաների համար այն կյանքի անբաժանելի մասնիկն է: Երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով՝ խաղեր, մուլտֆիլմեր նկարներ և այլն:

Համացանցը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր է: Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, «*ինչու*-ների» պատասխանները կարող են գտնվել համացանցում: Հետևաբար համացանցը կարող է դրական ազդեցություն ունենալ աշակերտների վրա, և որից էլ օգտվելով այն կարող ենք ծառայեցնել ուսումնական նպատակին: Աշակերտների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել համացանցից ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ: Միաժամանակ, համակարգչի և համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ:

Իսկ որո՞նք են այդ *բացասական ազդեցությունները*: Համակարգչի առջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխաների մոտ ընդհանուր թուլություն և հոգնածություն է դրսևորվում, քնի խանգարումներ: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա (մասնավորապես երեխայի հիշողությունն է վատանում, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Ապացուցված է նաև այն երեխաները, ովքեր շատ են օգտվում համացանցից կորցնում են գիրք կարդալու ցանկությունը:

Երեխայի աշխարհահայացքի ձևավորման վրա համացանցը նույնպես թողնում է իր ազդեցությունը: Կարելի է ասել, որ համացանցը ազդում է երեխայի աշխարհայացքի ձևավորման վրա:

Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին: Չի բացառվում, որ երեխաները ևս նմանօրինակ ինֆորմացիայի հանդիպեն: Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության և տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգել ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա:

Շատ ենք լսում, որ համակարգչային խաղերը բացասական են ազդում երեխաների վրա: Եկենք փորձենք հասկանալ թե ինչու: Խաղալով երեխաները նույնանում են իրենց վիրտուալ կերպարի հետ՝ դառնալով ագրեսիվ, կոնֆլիկտային, դյուրագրգիռ ու նյարդային: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները, հատկապես երբ նրանց

փորձում են հեռացնել, կտրել համակարգչից: Արդյունքում՝ երեխաների մոտ կարող է ձևավորվել այն դիրքորոշումը, որ եթե վիրտուալ աշխարհում կարելի է, թույլատրելի է սպանել, կործանել ու քանդել, ապա դա կարելի է անել նաև իրական աշխարհում: Դրանք կարող են նաև մանկական վախերի առաջացման պատճառներից մեկը լինել: Սովորաբար, համակարգչային կախվածությունը հստակ արտահայտվում է 9-10 տարեկան երեխաների մոտ: Հենց համակարգչային դերային խաղերն են յուրաքանչյուր երեխայի համար հոգեբանական կախվածության մեծ վտանգ ներկայացնում: Երկար համացանցից օգտվելուց երեխայի երևակայությունը սահմանափակվում է: Գերմանացի մանկաբույժ Պիտր Վինտերշտայնը ավելի քան 17 տարի ուսումնասիրել է 5-6 տարեկան երեխաներին և պարզել, որ որքան շատ է երեխան ժամանակ անցկացնում համացանցում, այնքան քիչ դետալներ է օգտագործում նկարելիս, իսկ նկարված կերպարներն արտահայտված չեն: Նրանց նկարած կերպարներն անհամաչափ են, նկարները՝ ավելի սխեմատիկ ու անկենդան:

5 եւ 6 տարեկան այն երեխաների նկարներն են ովքեր օրը 1 ժ.-ից ավել համացանցից չեն օգտվում :



Այն երեխաների նկարներն են, ովքեր համացանցից օգտվում են օրական 3 ժամ:



Ամեն դեպքում կանխարգելման ուղղությամբ պետք է տարվեն աշխատանքներ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքներում: Մեծ մասամբ վաղ տարիքում խաղային կախվածությունն է տարածված, իսկ համացանցային կախվածությունը՝ ավելի մեծ տարիքում:

Քանի որ նշեցիք կանխարգելումների մասին, եկեք քննարկենք մի քանի խորհուրդներ, որոնց միջոցով ծնողները կօգնեն իրենց երեխաներին:

Խորհուրդներ ծնողներին

- Ցանկալի է, որ երեխայի սենյակում համակարգիչ չլինի: Եթե երեխաները չափից շատ ժամանակ են անց կացնում համակարգչի մոտ, դա պետք է անհանգստացնի ծնողներին՝ նշանակում է, որ երեխան զբաղմունք չունի: Հարկավոր է զբաղմունք գտնել՝ զբաղվել սպորտով, երաժշտությամբ, այցելել լողավազան:
- Հետևե՛ք, թե երեխան ինչ է նայում և որքան ժամանակ է անցկացնում էկրանի առաջ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխանները, ովքեր նայում են

կրթական հաղորդումներ, ավելի հեշտությամբ են հարմարվում սոցիալական միջավայրում, առաջադեմ են դպրոցում, ունեն ավելի հարուստ բառապաշար:

- Հիշե՛ք, որ դաժան և բռնության տեսարանները մեծ տրավմա են պատճառում երեխային, որոնք հետագայում կարող են լուրջ ազդեցություն թողնել երեխայի հոգեկան աշխարհի վրա:
- Խոսե՛ք երեխայի հետ այն հույզերի մասին, որոնք նա ունենում է համացանցից օգտվելիս:

Քանի որ համացանցից օգտվելու կարողությունները ձևավորվում են դեռևս վաղ տարիքում, ապա ճիշտ կլինի ծնողները հետևեն, որ երեխան մուլֆիլմեր դիտի 3-4 տարեկանից ոչ շուտ, երբ արդեն ընդունակ է հասկանալ ոչ բարդ սյուժեները, քանի որ երեխան նույնացնում է իրեն հերոսի հետ, ցուցաբերում է հերոսին բնորոշ վարք: Իսկ արդեն դպրոցական տարիքում համացանցը կծառայի, որպես կրթական միջավայր:

Եվ ամենակարևորը, որ պետք է հիշեն ծնողները, այն է, երբ երեխայի և ծնողի միջև կա դիալոգ և մեծ է բնական շփումը, ապա այդ դեպքում շատ հեշտ է երեխային հասցնել նրան, որ ինքը ինքնուրույն գիտակցի, որ դա վնասակար է: Եթե ցույց տալ մի քանի բնական օրինակներ, ապա նա ինքնուրույն կորոշի:

Համացանցը որպես կթական գործիք



Մարդը ինֆորմացիայի 95% ստանում է տեսողական ընկալիչներով, իսկ 5%ը մնացած զգայարանների միջոցով: Հետևաբար մեր խնդիրն է ցանկացած ինֆորմացիա, որը մատուցում ենք աշակերտներին, դարձնենք ավելի տեսանելի և տպավորիչ: Այդ գործում մեզ օգնության են գալիս համացանցային ռեսուրսներն ու ՏՀՏ գործիքներն: Համացանցային ուսուցման շնորհիվ կարող ենք բարեփոխել կրթական համակարգը՝ դարձնելով այն ժամանակի պահանջներին առավել համապատասխանող: Դասավանդման նոր մեթոդներից և համացանցային նորարարություններից օգտվելով կարող ենք բարձրացնել գիտելիքի հանդեպ հետաքրքրությունն ու կարևորության գիտակցումը: Ի վերջո գիտելիքը պետք է լինի ազատ, անվճար, չուղղորդված և հասանելի բոլորին: Մեդիագրագիտության միջոցով մենք կպատրաստենք և կոգևորենք առավել մեծ թվով աշակերտների ընտրել ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ:

Այդ իսկ պատճառով մեդիագրագիտության կրթական ծրագրերը հիմնականում ուղղված են դպրոցներին: Ծրագրերի առաջին շահառուներն ուսուցիչներն են, որովհետև իրենց միջոցով ենք հասնում երեխաներին: Մեր նպատակն է հատկապես կրթական դաշտի ուշադրությունը բերել այս թեմայի վրա: Հետաքրքրությունն ավելի մեծացավ այն ժամանակ, երբ մեդիագրագիտությունը դարձավ հանրակրթական չափորոշիչ: Թվային և մեդիա կարողունակությունը սահմանում է, որ երեխան տիրապետի մեդիագրագիտության և անվտանգության հիմնական կանոններին՝ հասկանալով դրանց հետ կապված վտանգները: Մասնավորապես՝ ավագ խմբի երեխան պետք է կարողանա նշել իրական և մեդիա միջավայրերի տարբերությունները՝ մեդիայից ստացված տեղեկատվությունը համադրելով իրական կյանքին:

Համացանցային ռեսուրսներն այսօր անգնահատելի ու անսպառ աղբյուր են տեղեկատվական միջավայրի ստեղծման, կրթության և ինքնակրթության կազմակերպման, մասնագիտական և անձնական հետաքրքրությունների ու պահանջմունքների բավարարման համար:

Մեդիագրագիտությունը անհատի մասնագիտական շարունակական կատարելագործման մաս կազմող ամենակարևոր բաղադրիչների՝ ինքնակրթության և շարունակական կրթության ամուր հարթակ է ստեղծում:

Համացանցի կիրառումը ուսումնական գործընթացում կրթության բովանդակության բարեփոխումների համար կարևոր հիմքն են հանդիսանում:

Ուսուցիչը համացանցային գործիքներ կիրառելով՝ դասը դարձնում է առավել հետաքրքիր: Սովորողները մոտիվացվում են, իսկ յուրացման փուլը ավելի արագ ու արդյունավետ է ընթանում:

Համացանցը կրթության մեջ կիրառելու բազմաթիվ եղանակներ կան, ներկայացնենք առցանց մի քանի հարթակներ և դրանց օգտագործման եղանակները:

https://quizizz.com

Այս գործիքը հնարավորություն է տալիս իրականացնել սովորողների առցանց համաժամանակյա

միավորային գնահատում: Եվ բավականին արդյունավետ է կիրառել նյութի ամրապնդման ժամանակ: Գործիքի օգնությամբ կարելի է գնահատել սովորողների կողմից կատարած առաջադրանքների և՛ ճշտությունը, և՛ կատարման արագությունը:

https://wheelofnames.com/

Պատահական ընտրությամբ հարցում իրականացնելու համար տարբերվող գործիք:

https://learningapps.org/

Հնարավորություն է տալիս ստեղծել տարբեր թեստեր, խաչբառներ, ռեբուսներ: Նպատակահարմար է տարբեր տարիքային սովորողների համար:



https://www.mindmeister.com/

Այս գործիքը նախագծի անդամներին հասանելի հարթակ, աշխատանքը պլանավորելու, միմյաց նկատառումներ, լրացումներ անելու համար:

Ամփոփում

Համացանցը նախատեսված է տեղեկատվության ստեղծման, բազմազանացման և տարածման համար: Այն մեծ ներուժ ունի կրթական համակարգում օգտագործելու համար:

Զրույց: Մանկավարժի և սովորողների հետ հաղորդակցվելը համացանցի միջոցով (ՏՀՏ գործիքներով): Ինչն էլ ենթադրում է արագ արձագանք և ժամանակի ճիշտ բաշխում:

Հետաքրքրություն. Սովորողները, առավել ներգրավված լինելով տեխնոլոգիական աշխարհում՝ իրենց ժամանակի մեծ մասը համացանցում են անց կացնում: Ուսուցչի

առաջարկած թեմաները համացանցի միջոցով յուրացնելը մեծ հետաքրքրություն է առաջացնում:

Ինքնավարություն: Այս տեղեկատվական համակարգի արագ աճի շնորհիվ սովորողները ավելի ինքնավար են, երբ համացանցում ինքնուրույն տեղեկություններ են փնտրում ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ:

Ինտերակտիվություն: Սովորողները նախապես ուսումնասիրելով տրված թեման, կարող են տարբեր հարթակներում խմբային քննարկումների միջոցով ազատ արտահայտվել և քննարկումներ իրականացնել:

Հետադարձ կապ: Սովորողները համապատասխան հարթակում ներկայացնում են աշխատանքը և կարճ ժամանակում ստանում ուսուցչի կողմից նկատառումներ: Արագ շտկելով շարունակում են իրենց աշխատանքը:

Մոտիվացիա: Սովորողները մեծ ոգևորությամբ և բարձր արդյունավետությամբ են աշխատում, երբ դասապրոսեցում կիրառվում է համացանցը:

Համացանցի օգտագործումը շատ արդյունավետ և դրական է կրթական գործընթացի համար, սակայն հնարավոր չէ չնկատել թերությունները.

Կեղծ տեղեկություններ: Համացանցը լի է կեղծ կամ դիտավորյալ աղավաղված տեղեկատվություն, ինչը սովորողների համար տարակուսանք է առաջացնում: Այդ պատճառով շատ կարևոր է նրանց առաջնորդել և ուսուցանել, թե ինչպես օգտվել վստահելի կայքերց:

Մեկուսացում: Սովորողների համացանցի չափազանց մեծ օգտագործումը կարող է ազդել անհատի սոցիալական զարգացման վրա:

Համացանցի ճնշման տակ կատարվող մանկան հոգեբանության փոփոխությունները առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետեւանքների թե՛ երեխաների, թե՛ նրանց ծնողների համար: Այդ խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հօգուտ ապագայի, հօգուտ երեխայի:

Այսպիսով, յուրաքանչյուրս պետք է հետևենք համացանցի առաջընթացին, բարձրացնենք դրանց ճիշտ օգտագործման մասին իրազեկությունը: Վերջիններս էլ մեզ կտանեն դեպի շատ ավելի դինամիկ, արդյունավետ կրթության մակարդակ:

Այնուամենայնիվ, փորձենք աշխարհին նայել երեխայի աչքերով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանտուլենկո Վ. «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»

2. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., ՇարխաթունյանՀ.«Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումըհանրակրթական դպրոցում»:
3. Բուդաղյան Ա. Ս., Կարաբեկյան Ս. Բ. «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց» :
4. Антон Платов. Дети и родители Сеть. Мир компьютеров. - № 3. 2004 год.
5. Safe.am